Digitally signed by
GRIGORYAN RAFIK 1507760116
Date: 30.06.2025 23:58:36

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ**
**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
**Հիմնադրամի հոգաբարձուների**
**խորհրդի 26-06-2025 թ. որոշմամբ**
**««ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»»**
**Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**
**հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին**

| | | |
|---|---|---|
| **1. Հիմնադրամի՝** | | |
| 1.1 Լրիվ անվանումը | | «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» |
| 1.2 Գտնվելու վայրը | | ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ ԱԼ. ՄԱՆՈՒԿՅԱՆ 1 |
| 1.3 Պետական գրանցման համարը | | 222.160.840081 |
| 1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | | 2002-01-31 |
| 1.5 ՀՎՀՀ-ն | | 01506928 |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | | +(374)60710170 |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | | www.ysu.am |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | | rgrig@ysu.am |
| **2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝** | | |
| | | |
| **3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝** | | |
| | | |
| **4. Կառավարչի անուն, ազգանուն՝** | | |
| | | |
| **5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը** | 3258 | |
| **6. Անձեռնմխելի կապիտալի չափը** | | |
| **7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ** | | |
| **8. Ֆինանսավորման աղբյուրները՝** | | |
| 8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի | 8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը | 8.3 Չափը |
| 8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր | | |
| | բարձրագույն կրթություն | 2,222,555 |
| 8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր | | |
| | | |
| 8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր | | |
| | | |
| **9. Հիմնադրի ներդրումը՝** | | |
| 9.1 Դրամական միջոցներ | | |
| 9.2 Գույք | 9.2.1 Տեսակը | 9.2.2 Արժեքը |

| | | |
|---|---|---|
| | | |
| **10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները** | | |
| 10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝ | 10.2 Նվիրված/նվիրաբերված գույք | |
| | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
| 10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ | | |
| | | |
| 10.1.2 Իրավաբանական անձինք | | |
| | | |
| 10.1.3 Ֆիզիկական անձինք | | |
| | | |
| **11. Իրականացված ծրագրերը՝** | | |
| 11.1 Ծրագրի անվանումը | 11.2 Ծախսված գումարը | |
| Բարձրագույն կրթություն | 2,222,120 | |
| **12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը** | 2,222,120 | |
| **13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը** | 0 | |

**Նշումներ՝**

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 37 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

# «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
# ՀԻՄՆԱԴՐԱՄ

## Համախմբված ֆինանսական հաշվետվություններ
## 2024թ. դեկտեմբերի 31-ին
## ավարտված տարվա համար

## Բովանդակություն


| | |
|---|---|
| Անկախ աուդիտորական եզրակացություն | 3 |
| Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն | 6 |
| Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ եկամտի մասին համախմբված հաշվետվություն | 7 |
| Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն | 8 |
| Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն | 9 |
| Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 10 |

AMH AUDIT
HLB WE ARE AN INDEPENDENT MEMBER OF THE GLOBAL ADVISORY AND ACCOUNTING NETWORK

Էյ-Էմ-Էյչ Աուդիտ ՓԲԸ
ՀՀ, Երևան, 0023,
Արշակունյաց պող. 2,
գրասենյակ V-03

Հեռ.՝ +(374 60) 62 32 51
Կայքեր՝ www.amhaudit.am
www.hlb.global

# Անկախ աուդիտորական եզրակացություն

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

*Կարծիք*

Մենք իրականացրել ենք «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետև՝ «Հիմնադրամ») և նրա դուստր կազմակերպությունների (այսուհետև միասին՝ «Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ եկամտի, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս գործունեության արդյունքները և դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

*Կարծիքի արտահայտման հիմքեր*

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Նշված ստանդարտներով նախատեսված մեր պարտականությունները ներկայացված են մեր եզրակացությունում *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների վարքագծի միջազգային ստանդարտների խորհրդի Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՎՄՍԽ Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծին վերաբերող մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀՎՄՍԽ Վարքագրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

*Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար*

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

AMH AUDIT HLB WE ARE AN INDEPENDENT MEMBER OF THE GLOBAL ADVISORY AND ACCOUNTING NETWORK

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պետք է իրականացնի Խմբի անընդհատ գործելու կարողության գնահատում, բացահայտելով, կիրառելի լինելու դեպքում, անընդհատությանը վերաբերող հարցերը և կիրառելով անընդհատության հիմունքով հաշվառումը, բացառությամբ այն դեպքերի երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարել Խումբը կամ դադարեցնել վերջինիս գործունեությունը կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:
Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են վերահսկել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացը:

*Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիք առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են սխալի կամ խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ երաշխիքը հավատահանման բարձր աստիճան է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ների համաձայն աուդիտի իրականացման ընթացքում միշտ հնարավոր կլինի հայտնաբերել էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե կարելի է պատճառաբանված կերպով ակնկալել, որ, առանձին կամ միասին վերցված, ազդեցություն կունենան այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կողմից կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն աուդիտի ընթացքում: Մենք նաև՝

- հայտնաբերում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին անդրադարձող աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել գաղտնի համաձայնություն, կեղծիք, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ՝ տվյալ հանգամանքներում տեղին աուդիտորական ընթացակարգեր մշակելու, բայց ոչ Խմբի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:
- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և հարակից բացահայտումների հիմնավորվածությունը:
- կատարում ենք եզրահանգում՝ ղեկավարության կողմից անընդհատության հիմունքով հաշվառում կիրառելու տեղին լինելու վերաբերյալ և, հիմք ընդունելով ձեռք բերված աուդիտորական ապացույցները, կատարում ենք հետևություն, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որոնք կարող են լուրջ կասկածներ հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում

AMH AUDIT
HLB WE ARE AN INDEPENDENT MEMBER OF THE GLOBAL ADVISORY AND ACCOUNTING NETWORK

ուշադրություն հրավիրենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդ բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում՝ ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Խմբի կողմից անընդհատության հիմունքով գործունեություն իրականացման դադարեցմանը:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձությունները այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:
- պլանավորում և իրականացնում ենք Խմբի աուդիտ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ բիզնես մշավոների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ ձեռք ենք բերելու համար՝ որպես հիմք համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի նպատակով իրականացվող աշխատանքի ուղղորդման, ղեկավարման և ստուգման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի պլանավորված շրջանակների և ժամանակների, աուդիտի ընթացքում առաջացած էական հարցերի, այդ թվում աուդիտի ընթացքում հայտնաբերված ներքին վերահսկողության համակարգի էական թերությունների մասին:

Սույն անկախ աուդիտորական եզրակացությունը ներկայացնող հիմք հանդիսացող աուդիտի իրականացման պատասխանատու գործընկերն է՝

Արամ Հովհաննիսյան
*Գլխավոր տնօրեն*

«Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ
24 հունիսի 2025թ.

| **հազ. դրամ** | **Ծնթգ.** | **31 դեկտեմբերի 2024թ.** | **31 դեկտեմբերի 2023թ.** |
|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 5 | 80,964,635 | 69,927,892 |
| Ոչ նյութական ակտիվներ | 6 | 22,001 | 17,995 |
| Ներդրումային արժեթղթեր | | 509,225 | 6,000 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | | **81,495,861** | **69,951,887** |
| **Ընթացիկ ակտիվներ** | | | |
| Պաշարներ | 7 | 268,128 | 195,917 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 8 | 1,376,827 | 1,362,574 |
| Կարճաժամկետ ավանդներ բանկերում | 9 | 770,573 | 961,445 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 10 | 9,337,239 | 9,828,881 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | | **11,752,767** | **12,348,817** |
| **Ընդամենը ակտիվներ** | | **93,248,628** | **82,300,704** |
| **ՉՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | |
| Զուտ ակտիվներ | | 70,532,095 | 62,313,768 |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 11 | 5,388,355 | 5,085,434 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 17 | 12,857,597 | 11,219,799 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | | **18,245,952** | **16,305,233** |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Եկամուտներին վերաբերող շնորհներ | 11 | 1,545,685 | 1,451,236 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 12 | 2,318,193 | 1,752,882 |
| Պահուստներ | 13 | 423,068 | 395,856 |
| Շահութահարկի գծով պարտավորություններ | | 183,635 | 81,729 |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | | **4,470,581** | **3,681,703** |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **22,716,533** | **19,986,936** |
| **Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ** | | **93,248,628** | **82,300,704** |



Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 36-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

| **հազ. դրամ** | **Ծնթգ.** | **2024թ.** | **2023թ.** |
|---|---|---|---|
| Ուսման վարձերից եկամուտ | 14 | 7,334,274 | 7,382,671 |
| Եկամուտ շնորհներից | 14 | 5,321,742 | 4,910,222 |
| Այլ եկամուտ | 14 | 741,969 | 535,917 |
| | | **13,397,985** | **12,828,810** |
| Աշխատակիցներին հատուցումներ | | (10,335,182) | (9,312,817) |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | | (299,907) | (329,628) |
| Մաշվածություն և ամորտիզացիա | | (1,674,181) | (1,296,265) |
| Հեռահաղորդակցության ծախսեր | | (17,178) | (18,642) |
| Ապահովագրական ծախսեր | | (188,841) | (162,225) |
| Կրթաթոշակի գծով ծախսեր | | (223,034) | (266,140) |
| Գրասենյակային ծախսեր | 15 | (1,046,925) | (1,130,685) |
| Արժեզրկման կորուստ | | (149,604) | (716,431) |
| Այլ ծախսեր | | (792,952) | (151,871) |
| Այլ եկամուտ | | 104,916 | 289,556 |
| **Գործառնական գործունեությունից արդյունք** | | **(1,224,903)** | **(266,338)** |
| Ֆինանսական եկամուտ | 16 | 845,778 | 854,128 |
| Փոխարժեքային տարբերությունից (վնաս)/օգուտ | | (74,879) | 9,115 |
| **(Վնաս)/շահույթ մինչև շահութահարկով հարկումը** | | **(454,004)** | **596,905** |
| Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս) | 17 | 3,820 | (501,351) |
| **(Վնաս)/շահույթ տարվա համար** | | **(450,184)** | **95,554** |
| **Այլ համապարփակ արդյունք** | | | |
| Հիմնական միջոցների վերագնահատում՝ առանց հարկերի | | 8,668,511 | - |
| **Ընդամենը համապարփակ արդյունք** | | **8,218,327** | **95,554** |

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2025 թվականի հունիսի 24-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Հովհաննես Հովհաննիսյան
*Ռեկտոր*

Ռաֆիկ Գրիգորյան
*Գլխավոր հաշվապահ*

| հազ. դրամ | Վերագնահատման պահուստ | Պահուստային կապիտալ | Կուտակված արդյունք | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| **Մնացորդը առ 1 հունվարի 2023թ.** | 17,551,430 | 169,894 | 44,496,890 | 62,218,214 |
| Վնաս տարվա համար | - | - | 95,554 | 95,554 |
| Վերագնահատված հիմնական միջոցների մաշվածքի փոխանցում | (2,158,748) | - | 2,158,748 | - |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **15,392,682** | **169,894** | **46,751,192** | **62,313,768** |
| **Մնացորդը առ 1 հունվարի 2024թ.** | **15,392,682** | **169,894** | **46,751,192** | **62,313,768** |
| Վնաս տարվա համար | - | - | (450,184) | (450,184) |
| **Այլ համապարփակ եկամուտ** | | | | |
| Հիմնական միջոցների վերագնահատում՝ առանց հարկերի | 8,668,511 | - | - | 8,668,511 |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար** | 8,668,511 | - | (450,184) | 8,218,327 |
| Վերագնահատված հիմնական միջոցների մաշվածքի փոխանցում | (824,773) | - | 824,773 | - |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **23,236,420** | **169,894** | **47,125,781** | **70,532,095** |



Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 36-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

| հազ. դրամ | Ծնթգ. | 2024թ. | 2023թ. |
|---|---|---|---|
| ***Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր*** | | | |
| Տարվա (վնաս)/շահույթ | | (450,184) | 95,554 |
| ***Ճշգրտումներ*** | | | |
| Մաշվածության և ամորտիզացիայի | | 1,674,181 | 1,296,265 |
| Հիմնական միջոցների դուրսգրումից վնաս | | 285,491 | 210,395 |
| Շահութահարկի գծով (փոխհատուցում)/ծախս | | (3,978) | 501,351 |
| Շնորհներից եկամուտ | | (5,321,742) | (4,910,222) |
| Ֆինանսական եկամուտ | | (845,778) | (854,128) |
| Արժեզրկման կորուստ | | 149,604 | 716,431 |
| Ընթացիկ պահուստների փոփոխություն | | 27,212 | 44,919 |
| Փոխարժեքային տարբերությունից վնաս/(օգուտ) | | 74,879 | (9,115) |
| **Գործառնական արդյունք նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները** | | **(4,410,315)** | **(2,908,550)** |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի (աճ)/նվազում | | (86,052) | (896,120) |
| Պաշարների (աճ)/նվազում | | (72,211) | (18,412) |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր աճ/(նվազում) | | 571,468 | (188,875) |
| **Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ** | | (3,997,110) | (4,011,957) |
| Վճարված շահութահարկ | | (77,590) | (350,405) |
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | | **(4,074,700)** | **(4,362,362)** |
| **Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | | |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | | (2,151,320) | (1,921,161) |
| Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում | | (500,000) | - |
| Կարճաժամկետ բանկային ավանդներ | | 190,872 | 961,445 |
| Ստացված տոկոսներ | | 796,643 | 821,588 |
| **Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | | **(1,663,805)** | **(138,128)** |
| **Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | | |
| Շնորհներից մուտքեր | | 5,321,742 | 5,103,971 |
| **Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | | **5,321,742** | **5,103,971** |
| Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ (նվազում)/աճ | | (416,763) | 603,481 |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների վրա | | (74,879) | 9,515 |
| Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում | | 9,828,881 | 9,215,885 |
| **Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում** | 10 | **9,337,239** | **9,828,881** |



Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 36-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# 1 Նախապատմություն

## (ա) Հիմնադրամը և հիմնական գործունեությունը

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») և վերջինիս դուստր ընկերությունների (այսուհետ միասին՝ «Խումբ») գործունեության համար:

«Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հիմնադրվել է 2002թ.-ին: 2014թ. նոյեմբերին ՀՀ կառավարության որոշմամբ վերակազմակերպվել է հիմնադրամի: «Երևանի պետական համալսարան» հիմնադրամը «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման համարը՝ 273.210.03130) իրավահաջորդն է (փոխանցման ակտին համապատասխան):

Հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ կառավարության: Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող պետական կառավարման լիազոր մարմինը ՀՀ կրթության և գիտության նախարարությունն է:

Հիմնադրամը հաշվետու ամսաթվի դրությամբ ունի երեք դուստր ընկերություն՝
- «ԵՊՀ» հրատարակչություն ՍՊԸ,
- «ԵՊՀ երկրաբանական հետազոտությունների կենտրոն» ՍՊԸ, և
- «ԵՊՀ ուսանողական ծառայություններ» ՀՊԸ:

Հիմնադրամը չունի ասոցիացված կազմակերպություններ և համատեղ վերահսկվող միավորներ:

Հիմնադրամի գործունեության հիմնական տեսակները՝
- բարձրագույն, միջին, հետբուհական մասնագիտական, հանրակրթական և լրացուցիչ կրթության կազմակերպում,
- օտարերկրյա դիմորդների նախապատրաստական կրթության կազմակերպում, մշակույթի բնագավառում կրթական գործունեության իրականացում,
- գիտամանկավարժական կադրերի պատրաստում, վերապատրաստում, որակավորման բարձրացում,
- գիտահետազոտական, գիտատեխնիկական, արտադրական աշխատանքների իրականացում, դրանց արդյունքների առևտրայնացում
- խորհրդատվական, փորձագիտական ծառայությունների մատուցում,
- հրատարակչական, տպագրական գործունեության ծավալում և դրա արդյունքների իրացում, գրքերի և այլ տպագիր և էլեկտրոնային մեդիացներով գովազդի իրականացում,
- կրթական և ուսումնական վճարովի դասընթացների կազմակերպում,
- միջազգային ուսումնական և գիտատեխնիկական ծրագրերի իրականացում,
- աշխատողների, սովորողների և այլ անձանց հանրային սննդի, հանգստի, բուժման, կենցաղի կազմակերպում և սպասարկում:

Խումբն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում:

Աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը 2024թ. կազմել է 2,899 մարդ (2023թ.՝ 2,777 մարդ):

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամում սովորում են թվով 14,264 ուսանող, որոնցից 1,094 Իջևանի մասնաճյուղում:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամում սովորել են թվով 12,776 ուսանող, որոնցից 1,167 Իջևանի մասնաճյուղում:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1: Հիմնադրամը, բացի Ալեք Մանուկյան 1 հասցեից, գործունեություն է իրականացնում նաև Աբովյան 52 (թիվ 6 և 8 մասնաշենքեր), Կիևյան 1/ա (Քաղ. պաշտպանության մասնաշենք) հասցեներում, ինչպես նաև ք.

Իջևանում (մ/ճ), Ծաղկաձորի, Հանքավանում, Բյուրականի ուսումնական բազաներում և Դիլիջանում (ճամբար):

Հիմնադրամի կառավարումը հիմնված է իր ինքնավարության վրա՝ միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ, հիմնադրի, լիազոր մարմնի, հոգաբարձուների խորհրդի, գիտական և ռեկտորի գործառույթների իրականացմամբ:

Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝
1) հոգաբարձուների խորհուրդը
2) կառավարիչը (այսուհետ՝ ռեկտոր):

Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է, որի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Հոգաբարձուների խորհուրդը ձևավորում է ԵՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի, սովորողների, հիմնադրի և լիազոր մարմնի ներկայացուցիչներից: ԵՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի անդամների թիվը 20 է.

- 5-ը՝ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ,
- 5-ը՝ սովորողների ներկայացուցիչներ,
- 5-ը՝ հիմնադիր ներկայացուցիչներ են՝ առաջադրված ՀՀ վարչապետի կողմից պետական պաշտոն զբաղեցնող անձանցից,
- 5-ը՝ լիազոր մարմնի ներկայացուցիչներ են կրթության, գիտության, մշակույթի և տնտեսության տարբեր ոլորտներից:

Հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանումներն են ֆակուլտետները, գիտահետազոտական և կրթական ինստիտուտները, մասնաճյուղերը, ամբիոնները, կենտրոնները, բաժինները, լաբորատորիաները, գիտական գրադարանը, հրատարակչությունը և այլ ստորաբաժանումներ:

Հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանումների կարգավիճակը, գործառույթները, իրավասությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրամի կանոնադրությամբ և իրենց կանոնադրություններով:

Կապակցված կողմերի հետ գործարքները ներկայացված են ծանոթագրություն 21-ում:

### (բ) Հայաստանի գործարար միջավայրը

Խումբն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, նրա գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են բարեփոխվել և կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

## 2 Պատրաստման հիմունքները

### (ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն: Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»*:

Հիմնադրամի ղեկավարությունը որդեգրել է «զուտ ակտիվների» հիմունքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման մոտեցումը: Զուտ ակտիվը Խմբի ակտիվների և պարտավորությունների տարբերությունն է, այն ներառում է Խմբի կուտակված արդյունքը:

**(բ) Չափման հիմունքները**

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ հողամասերի և շենքերի և շինությունների (դասակարգվում են որպես հիմնական միջոցներ), որոնք չափվում են իրական արժեքով՝ հանած վերագնահատման ամսաթվից հետո կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

**(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ**

Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը («դրամ»), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Հիմնադրամի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նշվում է այլ տեղեկատվություն:

**(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում**

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա առավելագույն էական ազդեցություն ունեցող հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ կատարած կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 5-ում՝ Հիմնական միջոցներ:

***Իրական արժեքի որոշում***

Հիմնադրամի հաշվապահական հաշվառման մի շարք դրույթներ և բացահայտումներ պահանջում են իրական արժեքի որոշում ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Հիմնադրամը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտարկելի շուկայական տվյալները:
Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների, հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև՝

*1-ին մակարդակ.* համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված),

*2-րդ մակարդակ.* 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակի որոնք (այսինքն՝ գների վրա հիման վրա ստացվող),

*3-րդ մակարդակ.* ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործվող ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակների, ապա իրական արժեքի չափումն ամբողջությամբ դասվում է հիերարխիայի այն նույն մակարդակին, որին դասվում են այն նվազագույն մակարդակի ելակետային տվյալները, որոնք էական են ամբողջությամբ վերցված իրական արժեքի չափման համար:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղի ունեցող փոխանցումներն Հիմնադրամը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում տեղի են ունեցել փոփոխությունները:

## 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Որոշ համեմատական գումարներ վերադասավորվել են ընթացիկ տարվա ներկայացումներին համապատասխանելու նպատակով:

### (ա) Համախմբման հիմքը

***(i) Դուստր կազմակերպություններ***

Դուստր կազմակերպությունները Խմբի կողմից վերահսկվող կազմակերպություններն են: Դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները ներառվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում վերահսկողության սահմանման ամսաթվից և դադարում են ներառվելուց վերահսկողությունը կորցնելու ամսաթվից: Դուստր կազմակերպությունների հաշվապահական հաշվառման քաղաքականությունը ըստ անհրաժեշտության փոփոխվում է, որպեսզի համընկնի Խմբի կողմից ընդունվածների հետ:

***(ii) Համախմբման ժամանակ բացառվող հաշվապահական գործարքներ***

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ներխմբային հաշվարկների մնացորդներն ու գործառնությունները, ինչպես նաև ներխմբային գործառնություններից առաջացող ցանկացած չիրացված եկամուտները և ծախսերը բացառվում են:

### (բ) Հիմնական միջոցներ

***(i) Ճանաչում և չափում***

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական կամ իրական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռք բերմանն ուղղակի վերագրելի ծախսումները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում են համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ եկամուտ/Այլ ծախս» բաժնվածում՝ շահույթում կամ վնասում:

***(ii) Հետագա ծախսումներ***

Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Խումբ կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

### *(iii) Հողամասերի և շենքերի և շինությունների վերագնահատում*

Հողամասերը և շենքերը և շինությունները չափվում են իրական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները, որոնք ճանաչվել են վերագնահատման ամսաթվից հետո: Վերագնահատումները կատարվում են բավարար պարբերականությամբ, որպեսզի հաշվեկշռային արժեքը էականորեն չտարբերվի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ իրական արժեքից:

Եթե ակտիվների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճն ուղղակիորեն ճանաչվում է այլ համապարփակ եկամտում և կուտակվում զուտ ակտիվներում վերագնահատումից արժեքի աճի հոդվածում: Այնուամենայնիվ, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվների նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ այն չափով, որով նախապես նվազումը ճանաչվել էր շահույթում կամ վնասում: Եթե ակտիվների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուամենայնիվ, նվազումը ճանաչվում է այլ համապարփակ եկամտում այն գումարի չափով, որը չի գերազանցում այդ ակտիվների գծով վերագնահատումից արժեքի աճի առկա կրեդիտային մնացորդը: Այլ համապարփակ եկամտում ճանաչված նվազումը պակասեցնում է զուտ ակտիվներում վերագնահատումից արժեքի աճի հոդվածում կուտակված գումարը:

Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը, որը ներառված էր զուտ ակտիվներում, ուղղակիորեն վերագրվում է կուտակված արդյունքին, երբ ակտիվները ապաճանաչվում են: Վերագնահատումից արժեքի աճի ամբողջի վերադրումը կուտակված արդյունքին տեղի է ունենում, երբ ակտիվը դուրս է գրվում կամ օտարվում է: Այնուամենայնիվ, վերագնահատումից արժեքի աճի որոշ մասը վերագրվում է կուտակված արդյունքին՝ խմբի կողմից ակտիվի օգտագործմանը զուգընթաց: Այս դեպքում, վերագրվող գումարի մեծությունը ակտիվների վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվների սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության միջև եղած տարբերությունն է:

Վերագնահատումից արժեքի աճի վերագրումը կուտակված արդյունքին չի կատարվում շահույթի կամ վնասի միջոցով:

### *(iv) Մաշվածություն*

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց օգտագործման համար մատչելի դառնալու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը:

Ստորև ներկայացված են օգտակար ծառայության գնահատված ժամկետները ընթացիկ և համեմատական ժամանակաշրջանների համար:

| | |
|---|---|
| Շենքեր և շինություններ | 5-100 տարի |
| Կառուցվածքներ | 5-20 տարի |
| Մեքենաներ, սարքավորումներ և փոխանցող հարմարանքներ | 5-20 տարի |
| Տրանսպորտային միջոցներ | 5-20 տարի |
| Տնտեսական գույք | 5-20 տարի |
| Թանգարանային գույք | Չմաշվող, 3-5 տարի |

Հիմնական միջոցների մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճշտվում են ըստ անհրաժեշտության:

**(գ) Ոչ նյութական ակտիվներ**

***(i) Ճանաչում և չափում***

Խմբի կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները, որոնք ունեն օգտակար ծառայության սահմանափակ ժամկետ, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

***(ii) Հետագա ծախսումներ***

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ նրանք ավելացնում են ոչ նյութական ակտիվի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները:

***(iii) Ամորտիզացիա***

Ամորտիզացիան ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Ամորտիզացիայի հաշվարկը սկսվում է, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համեմատական ժամանակաշրջանների համար հետևյալն են.

| | |
|---|---|
| ▪ Համակարգչային ծրագրեր | 3-10 տարի |
| ▪ Լիցենզիաներ | 1-2 տարի, անժամկետ |
| ▪ Արտոնագրեր | 1-2 տարի, անժամկետ |
| ▪ Այլ ոչ նյութական ակտիվներ | 1-10 տարի |

Ամորտիզացիայի հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճշտվում են ըստ անհրաժեշտության:

**(դ) Պաշարներ**

Պաշարները ներկայացված են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է առաջին մուտքը առաջին ելք (ՖԻՖՈ) սկզբունքով և ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարները, որոնք ենթակա չեն Խմբին հետ վերադարձման, ինչպես նաև տրանսպորտային, բեռնման և բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են դրանց ձեռքբերման հետ: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը գնահատում է առկա պաշարների իրացման զուտ արժեքը: Խմբի ղեկավարությունը կիրառում է դատողություն՝ դրանց իրացման զուտ արժեքը որոշելու հարցում՝ ելնելով այդ պաշարների բնույթից: Եթե գնահատման արդյունքում պարզվում է, որ պաշարների իրացման զուտ արժեքն ավելի փոքր է, քան դրանց սկզբնական արժեքը, ապա գրանցված տարբերությունը ծախսագրվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ եկամտի համախմբված հաշվետվությունում:

**(ե) Ֆինանսական գործիքներ**

***(i) Ճանաչում և սկզբնական չափում***

Առևտրական դեբիտորական պարտքերի սկզբնական ճանաչումը տեղի է ունենում դրանց, առաջացման օրը: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում, երբ Խումբը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Ֆինանսական ակտիվի (եթե այն առևտրական դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում էական ֆինանսավորման բաղկացուցիչ) կամ ֆինանսական պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական

արժեքով չչափվող միավորի համար, գործիքի ձեռքբերմանը կամ թողարկմանն ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները: Էական ֆինանսավորման բաղկացուցիչ չպարունակող առևտրական դեբիտորական պարտքի սկզբնական չափումն իրականացվում է գործարքի գնով:

***(ii) Դասակարգում և հետագա չափում***

**Ֆինանսական ակտիվներ**

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող պարտքային ներդրում, իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող բաժնային ներդրում կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը փոփոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց վրա ազդում է այդ փոփոխությունը, վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախատեսված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական միջոցների հոսքեր հավաքագրելու համար, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք դասակարգված չեն որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ եկամտի միջոցով իրական արժեքով չափվող, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Սկզբնական ճանաչման պահին Խումբը կարող է անդառնալիորեն նախատեսել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ եկամտի միջոցով իրական արժեքով չափման պահանջները, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

**Ֆինանսական ակտիվներ - Բիզնես մոդելի գնահատում**

Խումբը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակներում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեության կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Գնահատման ժամանակ դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունն ուղղված է պայմանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացմանը կամ դրամական միջոցների հոսքերի իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով,
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ֆինանսական ակտիվների) արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- ֆինանսական ակտիվների նախորդ ժամանակաշրջանների վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները:

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմանները, չի դիտարկվում որպես վաճառք այս նպատակի համար և Խումբը շարունակում է ճանաչել ակտիվները:

**Ֆինանսական ակտիվներ - Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ**

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» բաղկացած է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար փոխհատուցումից, ինչպես նաև շահույթի մարժայից:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Խումբը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այստեղ ներառվում է այն գնահատումը, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական միջոցների ժամկետը կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Խումբը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական միջոցների գումարը կամ ժամկետները,
- վաղաժամկետ մարման և գործողության ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Խումբի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ (օրինակ՝ ոչ վերադարձնելի ֆինանսական ակտիվից):

Վաղաժամ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշին, եթե վաղաժամկետ մարման գումարն ըստ էության իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել պայմանագրի վաղաժամ դադարեցման համար ողջամիտ լրացուցիչ փոխհատուցում:

**Ֆինանսական ակտիվներ - Հետագա չափում, շահույթ և վնաս**

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորստի չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը և արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

**Ֆինանսական պարտավորություններ - Դասակարգում, հետագա չափում, շահույթ և վնաս**

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած շահույթը կամ վնասը նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

***(iii) Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխություն***
**Ֆինանսական ակտիվներ**

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոխվում են, Խումբը գնահատում է, թե արդյոք փոփոխված ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական

ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով:

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինող ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերից: Խումբը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը քանակական և որակական գործոնների հիման վրա հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Խումբը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Խումբը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է ելնելով հետևյալ որակական գործոններից.

- ֆինանսական ակտիվի արտարժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների ազդեցիկ փոփոխություն, որի արդյունքում միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանձնառանալու չափանիշը չի բավարարվում (օրինակ՝ փոխարկման պայմանի ավելացում)

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր չեն, փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը: Այս դեպքում, Խումբը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտումից առաջացող գումարը ճանաչում է որպես փոփոխության գծով շահույթ կամ վնաս՝ շահույթի կամ վնասի կազմում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված, վերանայված կամ փոփոխված պայմանագրային դրամական միջոցների ներկա արժեք: Ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճշգրտում են փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված ֆինանսական ակտիվի գործողության մնացած ժամկետի ընթացքում:

**Ֆինանսական պարտավորություններ**

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պայմաններով պարտավորության գծով դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե փոփոխությունը (կամ փոխարինումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Խումբը կիրառում է այն Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Խումբը ճանաչում է փոփոխության (կամ փոխարինման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտումը շահույթում կամ վնասում փոփոխության (կամ փոխարինման) ամսաթվի դրությամբ:

Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների գծով դրամական միջոցների հոսքերի փոփոխությունները չեն համարվում փոփոխություն, եթե հանդիսանում են գործող պայմանագրային պայմանների արդյունք:

Խումբն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Խումբը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արտարժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման պայմանի ավելացում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմանների համաձայն դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ՝ վճարված վճարները (առանց ստացված վճարների)՝ զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության գծով մնացած դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխարինումը կամ վերջիններիս պայմանների փոփոխությունը հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճանաչվում են որպես մարումից շահույթի կամ վնասի մաս: Եթե փոխարինումը կամ պայմանների փոփոխությունը չի հաշվառվում որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճշգրտում են պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված պարտավորության գործողության մնացած ժամկետի ընթացքում:

***(iv) Ապահանաչում***

**Ֆինանսական ակտիվներ**

Խումբն ապահանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում, Խումբը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում վերահսկողությունը ֆինանսական ակտիվի նկատմամբ:

**Ֆինանսական պարտավորություններ**

Խումբն ապահանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Խումբը նաև ապահանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապահանաչման ժամանակ մարված հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ոչ դրամական ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

***(v) Հաշվանցում***

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են և ներկայացվում են զուտ գումարով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ Խումբն ունի գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

**(զ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են բանկերում պահվող ցպահանջ ավանդները և այլ կարճաժամկետ բարձր լրացելիություն ունեցող ներդրումները՝ երեք ամիս կամ դրանից պակաս սկզբնական մարման ժամկետով: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով քանի որ (i) պահվում են պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար և այդ պայմանագրային դրամական հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ և (ii) նախորոշված չեն որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

**(է) Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր**

Առևտրային դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ հետագայում հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ:

**(ը) Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը**

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը հաշվեկշռում ներկայացվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

**(թ) Կանխավճարներ**

Կանխավճարները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանելով արժեզրկման համար պահուստը: Կանխավճարները դասակարգվում են որպես ոչ ընթացիկ, երբ կանխավճարին վերաբերող ապրանքներն ու ծառայությունները ակնկալվում է ստանալ մեկ տարի հետո կամ երբ կանխավճարը վերաբերում է այնպիսի ակտիվի, որը սկզբնական ճանաչման ժամանակ կդասակարգվի որպես ոչ ընթացիկ: Ակտիվներ ձեռք բերելու գծով կանխավճարները փոխանցվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ Խումբը ստանում է ակտիվի նկատմամբ վերահսկողություն և հավանական է, որ ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Խումբ: Այլ կանխավճարները ծախսագրվում են շահույթի կամ վնասի կազմում, երբ կանխավճարի հետ կապված ապրանքը կամ ծառայությունը ստացվում է: Եթե կա այնպիսի հայտանիշ, որ կանխավճարին վերաբերող ակտիվները, ապրանքները կամ ծառայությունները չեն ստացվի, ապա կանխավճարի հաշվեկշռային արժեքը համապատասխանաբար դուրս է գրվում և արժեզրկումից կորուստը ճանաչվում է արտարժույթում շահույթում կամ վնասում:

**(ժ) Հասույթ**

Խմբի եկամուտները գոյանում են Հիմնադրամի կողմից ուսումնական ծառայությունների մատուցման դիմաց ուսման վարձերից, այլ ծառայությունների մատուցումից, ապրանքների վաճառքից և ստացված շնորհներից:

- ***Ծառայությունների մատուցումից***

Ուսումնական ծառայությունների մատուցումից եկամուտը ճանաչվում է ժամանակի ընթացքում, քանի որ ուսանողները միաժամանակ են ստանում և սպառում ուսումնական ծառայությունների օգուտները: Այս եկամուտը ներառվում է «Հասույթ» հոդվածում:

- ***Ապրանքների վաճառքից***

Ապրանքների վաճառքից ստացված հասույթը ճանաչվում է այն դեպքում, երբ բավարարվել են հետևյալ բոլոր պայմանները.

ա) Հիմնադրամը գնորդին է փոխանցել ապրանքների սեփականության իրավունքի հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը,
բ) վաճառված ապրանքի նկատմամբ Հիմնադրամը չի պահպանում ո՛չ կառավարչական շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, ո՛չ էլ ըստ էության հսկողություն,
գ) հնարավոր է հասույթի գումարը արժանահավատորեն չափել,
դ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները հոսեն Հիմնադրամ, և

ե) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսերը:

Սովորաբար, սեփականության իրավունքի հետ կապված ռիսկերի և հատույցների փոխանցումը համընկնում է օրենքով նախատեսված ձևով իր ավունքի փոխանցման կամ գնորդի տիրապետմանը հանձնելու հետ:

Ապրանքների վաճառքի ժամանակ դրանց հաշվեկշռային արժեքը պետք է ճանաչվի որպես ծախս այն ժամանակահատվածում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հատույթը:

- ***Շնորհներ և եկամուտ նվիրատվություններից***

Եկամուտներին և ակտիվներին վերաբերող շնորհների սկզբնական ճանաչումն իրականացվում է իրական արժեքով, երբ կա հիմնավոր հավաստիացում, որ շնորհը կստացվի և Հիմնադրամը բավարարելու է շնորհի հետ կապված պայմանները: Ակտիվներին վերաբերող շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում սիստեմատիկ հիմունքով ակտիվի օգտակար ծառայության ընթացքում: Եկամուտներին վերաբերող շնորհները, որոնք փոխհատուցում են Հիմնադրամի կրած ծախսերը, ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես շնորհներից և նվիրատվություններից ստացվող եկամուտ սիստեմատիկ հիմունքով այն նույն ժամանակաշրջաններում, երբ ծախսերը ճանաչվում են: Այս եկամուտը ներառվում է «Եկամուտ շնորհներից» հոդվածում:

- ***Վարձակալակությունից***

Խմբի գույքից վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում: Այս եկամուտը ներառում է «Այլ եկամուտ» հոդվածում:

**(ի) Ֆինանսական եկամուտ և ծախսեր**

Խմբի ֆինանսական եկամուտը և ծախսերը ներառում են.
- ներդրումների գծով տոկոսային եկամուտը,
- փոխարժեքային տարբերություններից ստացված օգուտը կամ վնասը:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում հաշվեգրվելուն պես՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Փոխարժեքային տարբերություններից առաջացած օգուտը և վնասը ներկայացվում են զուտ հիմունքով որպես ֆինանսական եկամուտ կամ ծախս:

**(լ) Արտարժույթ**

***(i) Արտարժույթով գործարքներ***

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Արտարժույթի փոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

**(խ) Աշխատակիցների հատուցումներ**

Խումբը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները չափում է չզեղչված հիմունքով և ծախսագրում է, երբ համապատասխան ծառայությունը ստացվում է:

Պարտավորություն է ճանաչվում աշխատակիցներին վճարման ենթակա այն գումարների մասով, որոնց համար աշխատակցի կողմից մատուցված ծառայության դիմաց Խումբն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը կարող է արժանահավատորեն գնահատվել:

**(ծ) Շահութահարկի գծով ծախս**

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված տարրերին:

***(i) Ընթացիկ հարկ***

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի կամ վնասի գծով վճարման կամ ստացման ենթակա հարկի գումարն է, որը ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

***(ii) Հետաձգված հարկ***

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որն ազդեցություն չունի ոչ հաշվապահական և ոչ էլ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով, այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

Հետաձգված հարկի գումարը չափվում է կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք Խումբն ակնկալում է, ունենալ երբ հաշվետու ժամանակաշրջանի վերջում իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կվերականգնի կամ կհաշվանցվի:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Խումբն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն Խումբը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

**(կ) Պահուստներ**

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական

միջոցների ապագա հոսքերը զեղչելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում դրամի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Զեղչի վերականգնումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

**(h) Վարձակալություն**

***(i) Կարճաժամկետ և ցածրարժեք վարձակալություններ***

Խումբը կիրառում է ՖՀՄՍ 16 սանդարտում նախատեսված կարճաժամկետ վարձակալության ճանաչման ազատումը մեքենաների և սարքավորումների և գրասենյակային գույքի կարճաժամկետ վարձակալության դեպքում: Սրանք այն վարձակալություններն են, որոնց ժամկետը մինչև 12 ամիս է և չեն պարունակում գնման տարբերակ:

Կարճաժամկետ վարձակալության վարձավճարները ճանաչվում են որպես ծախս գծային հիմունքով՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

## 4 Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ գործում են 2024թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է այդ ստանդարտների վաղաժամ կիրառումը: Այնուամենայնիվ, այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Խումբը վաղաժամ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

**(ա) ՖՀՄՍ 18 «Տեղեկատվության ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում»**

ՖՀՄՍ 18-ը կփոխարինի ՀՀՄՍ 1 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* և կկիրառվի 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Նոր ստանդարտը ներկայացնում է հետևյալ հիմնական նոր պահանջները.

- Կազմակերպություններից պահանջվում է շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտները և ծախսերը դասակարգել ըստ հինգ դասերի՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, ընդհատված գործառնություններ և շահութահարկ: Կազմակերպություններից նաև պահանջվում է ներկայացնել նոր սահմանված գործառնական շահույթի ենթագումարը: Կազմակերպության զուտ շահույթը չի փոխվի:
- Ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչները բացահայտվում են ֆինանսական հաշվետվությունների մեկ ծանոթագրությունում:
- Տրվում է ընդլայնված ուղեցույց ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվությունը խմբավորելու վերաբերյալ:

Բացի այդ բոլոր կազմակերպություններից պահանջվում է օգտագործել գործառնական շահույթի ենթագումարը որպես մեկնարկային կետ դրամական հոսքերի մասին հաշվետվության համար՝ անուղղակի մեթոդով գործառնական գործունեության դրամական հոսքերը ներկայացնելիս:
Ներկայումս Խումբը գնահատում է նոր ստանդարտի ազդեցությունը, մասնավորապես, շահույթի կամ վնասի մասին համախմբված հաշվետվության, դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվության կառուցվածքի և ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչների համար պահանջվող լրացուցիչ բացահայտումների հետ կապված: Խումբը նաև գնահատում է ազդեցությունը համախմբված ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվության խմբավորման վրա, այդ թվում այն հոդվածների համար, որոնք ներկայումս նշվում են որպես «այլ»:

**(բ) Այլ հաշվապահական հաշվառման ստանդարտներ**

Ստորև ներկայացված նոր կամ փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Փոխանակման հնարավորության բացակայություն (ՀՀՄՍ 21-ի փոփոխություններ)
- Ֆինանսական գործիքների դասակարգում և չափում (ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ:

# 5 Հիմնական միջոցներ

| հազ. դրամ | Հողամասեր | Շենքեր և շինություններ | Կառուցվածքներ | Մեքենաներ, սարքավորումներ և փոխանցող հարմարանքներ | Տրանսպորտային միջոցներ | Տնտեսական գույք և այլն | Թանգարանային գույք | Անավարտ շինարարություն | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ***Սկզբնական կամ վերագնահատված արժեք*** | | | | | | | | | |
| **Առ 1 հունվարի 2023թ.** | **14,010,812** | **60,441,599** | **345,107** | **3,654,730** | **259,433** | **4,140,598** | **112,336** | **1,172** | **82,965,787** |
| Ավելացումներ | - | 526,282 | 24,021 | 613,765 | 65,200 | 683,134 | - | - | 1,912,402 |
| Օտարումներ/Դուրսգրումներ | - | - | (1,097) | (49,077) | - | (159,533) | - | - | (209,707) |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **14,010,812** | **60,967,881** | **368,031** | **4,219,418** | **324,633** | **4,664,199** | **112,336** | **1,172** | **84,668,482** |
| Ավելացումներ | - | - | | 826,757 | 15,300 | 748,483 | 0 | - | 1,590,541 |
| Կապիտալացում | - | 479,139 | 37,257 | 28,303 | - | - | - | - | 544,699 |
| Վերագնահատումից արժեքի աճ/(նվազում) | 17,883,101 | (7,311,591) | - | - | - | - | - | - | 10,571,510 |
| Ներքին շարժ | - | (126,637) | 3,754 | (54,273) | (63,058) | 295,214 | (62,300) | 7,300 | - |
| Դուրս գրում | - | - | - | (79,784) | - | (203,754) | (499) | - | (284,037) |
| Օտարում | - | - | - | (4,693) | (15,119) | (109,463) | - | - | (129,275) |
| **Առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **31,893,913** | **54,008,792** | **409,042** | **4,935,728** | **261,756** | **5,394,679** | **49,538** | **8,472** | **96,961,920** |
| ***Մաշվածություն և արժեզրկումից կորուստներ*** | | | | | | | | | |
| **Առ 1 հունվարի 2023թ.** | **-** | **(7,462,475)** | **(215,726)** | **(2,436,352)** | **(133,727)** | **(3,251,360)** | **(107,627)** | **-** | **(13,607,267)** |
| Տարեկան մաշվածություն | - | (858,105) | (16,951) | (137,079) | (18,123) | (259,350) | - | - | (1,289,608) |
| Օտարումներ/դուրսգրումներ | - | - | - | 27,766 | - | 127,668 | 851 | - | 156,285 |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **-** | **(8,320,580)** | **(232,677)** | **(2,545,665)** | **(151,850)** | **(3,383,042)** | **(106,776)** | **-** | **(14,740,590)** |
| Տարեկան մաշվածություն | - | (1,032,622) | (18,916) | (267,732) | (19,189) | (324,425) | (0) | - | (1,662,884) |
| Ներքին շարժ | - | 136,358 | (308) | (243,218) | (6,022) | 56,451 | 56,739 | - | - |
| Դուրս գրում | - | - | - | 79,784 | - | 203,754 | 499 | - | 284,037 |
| Օտարումներ | - | - | - | 2,448 | 15,119 | 104,585 | - | - | 122,152 |
| **Առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **-** | **(9,216,844)** | **(251,901)** | **(2,974,383)** | **(161,942)** | **(3,342,677)** | **(49,538)** | **-** | **(15,997,285)** |
| ***Հաշվեկշռային արժեք*** | | | | | | | | | |
| Առ 31 դեկտեմբերի 2023թ. | **14,010,812** | **52,647,301** | **135,354** | **1,673,753** | **172,783** | **1,281,157** | **5,560** | **1,172** | **69,927,892** |
| **Առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **31,893,913** | **44,791,948** | **157,141** | **1,961,345** | **99,814** | **2,052,002** | **-** | **8,472** | **80,964,635** |

Տարվա մաշվածությունն ամբողջությամբ ներառվել է մաշվածություն և ամորտիզացիա հոդվածում: Դեռևս օգտագործման մեջ գտնվող, սակայն լրիվ մաշվածությունը հաշվարկված հիմնական միջոցների համախառն հաշվեկշռային արժեքը 2024թ. դեկտեմբերի 31-ին կազմում էր 5,008,094 հազ. դրամ, (2023թ.՝ 5,478,662 հազ. դրամ):

### (ա) Հողամասերի և շենքերի և շինությունների վերագնահատում

Ղեկավարությունը պայմանագիր է կնքել անկախ գնահատող «Օրրան» ՍՊԸ-ի հետ և հանձնարարել է գնահատել հողամասերի և շենքեր և շինությունների իրական արժեքը 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ: Հողամասերի իրական արժեքը ավելացել է 17,883,101 հազ. դրամով, իսկ շենքեր և շինություններինը նվազել է 7,311,591 հազ. դրամով:

Հիմնադրամի գնահատված հիմնական միջոցների մեծ մասը ստանդարտ բնույթի է և հաճախ վաճառվում է բաց շուկայում: Հետևաբար, գույքի և սարքավորումների իրական արժեքը հիմնականում գնահատվել է օգտագործելով շուկայական արժեքի որոշման համեմատական մեթոդը: Գնահատումներն իրականացրել են գնահատողի կողմից և հիմնված են հիմնական միջոցների տեսակի, գտնվելու վայրի և վիճակի վերաբերյալ վերջին գործարքների գնային տվյալների շտեմարանների վրա: Գնահատման նպատակով տնտեսական մաշվածության տեստավորում չի իրականացվել հաշվի առնելով Հիմնադրամի գործունեության ոչ առևտրային բնույթը:

Հիմնադրամի շենքեր և շինությունների կազմում 609,569 հազ. դրամ հաշվեկշռային արժեքով հաշվառված ԵՊՀ Հյուրերի տան մասով պետական գրանցման գործընթացը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դեռ չէր ավարտվել:

### (բ) Հիմնադրամի գրադարանի հնատիպ, հազվագյուտ և արվեստի գրականության գրքեր

ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի հնատիպ, հազվագյուտ և արվեստի գրականության բաժնում 16 գրքամատյաններ՝ հիման վրա պահվում են 14-րդ դարի 1 ձեռագիր և հնատիպ 21,521 միավոր գրքեր: Այս գրքերի հաշվեկշռային արժեքը չի արտացոլում նրանց իրական արժեքը: Միևնույն ժամանակ, ղեկավարությանը դեռևս չի հաջողվում դրանց իրական արժեքը որոշելու համար արտաքին գնահատող լիազորություն գտնել:

### (գ) Գրավադրված հիմնական միջոցներ

2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չուներ գրավադրված հիմնական միջոցներ:

## 6 Ոչ նյութական ակտիվներ

| հազ. դրամ | Համակարգչային ծրագրեր | Լիցենզիաներ | Արտոնագրեր | Այլ ոչ նյութական ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| ***Սկզբնական արժեք*** | | | | | |
| **Առ 1 հունվարի 2023թ.** | **30,319** | **1,800** | **1,335** | **58,791** | **92,245** |
| Ավելացումներ | 1,576 | 25 | - | 6,679 | 8,280 |
| Օտարումներ/Դուրսգրումներ | (189) | (20) | - | - | (209) |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **31,706** | **1,805** | **1,335** | **65,470** | **100,316** |
| Ավելացումներ | 7,522 | - | - | 8,558 | 16,080 |
| Օտարումներ/Դուրսգրումներ | (84) | - | (228) | (1,142) | (1,454) |
| **Առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **39,144** | **1,805** | **1,107** | **72,886** | **114,942** |
| ***Մաշվածություն և արժեզրկումից կորուստներ*** | | | | | |
| **Առ 1 հունվարի 2023թ.** | **(25,036)** | **(220)** | **(1,161)** | **(49,852)** | **(76,269)** |
| Տարեկան մաշվածություն | (2,529) | (67) | (7) | (4,095) | *(6,698)* |
| Օտարումներ/դուրսգրումներ | 189 | 20 | - | 437 | 646 |
| **Առ 31 դեկտեմբերի 2023թ.** | **(27,376)** | **(267)** | **(1,168)** | **(53,510)** | **(82,321)** |
| Տարեկան մաշվածություն | (1,986) | (66) | (4) | (8,867) | (10,923) |
| Օտարումներ/Դուրսգրումներ | 75 | - | 228 | - | 303 |
| **Առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **(29,287)** | **(333)** | **(944)** | **(62,377)** | **(92,941)** |
| ***Հաշվեկշռային արժեք*** | | | | | |
| Առ 31 դեկտեմբերի 2023թ. | **4,330** | **1,538** | **167** | **11,960** | **17,995** |
| **Առ 31 դեկտեմբերի 2024թ.** | **9,857** | **1,472** | **163** | **10,509** | **22,001** |

Տարվա մաշվածությունն ամբողջությամբ ներառվել է մաշվածություն և ամորտիզացիա հոդվածում:

## 7 Պաշարներ

| հազ. դրամ | 2024թ. | 2023թ. |
|---|---|---|
| Հումք և նյութեր | 100,825 | 66,794 |
| Շինանյութեր | 46,972 | 15,597 |
| Գրենական պիտույքներ | 37,094 | 23,491 |
| Ապրանքներ | 30,072 | 48,507 |
| Արտադրանք | 26,790 | 22,750 |
| Վառելիք | 11,907 | 4,969 |
| Այլ | 14,468 | 13,809 |
| | **268,128** | **195,917** |

## 8 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

| հազ. դրամ | 2024թ. | 2023թ. |
|---|---|---|
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 1,126,944 | 984,179 |
| Տրված կանխավճարներ | 199,436 | 15,144 |
| Դեբիտորական պարտքեր պետական բյուջեից | 46,240 | 281,609 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 183,218 | 188,848 |
| Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստ | (179,011) | (107,206) |
| | **1,376,827** | **1,362,574** |

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի հետ կապված Խմբի ենթարկվածությունը պարտքային ու արտարժույթի ռիսկերին ներկայացված է ծանոթագրություն 18-ում:

## 9 Կարճաժամկետ ավանդներ բանկերում

| հազ. դրամ | 2024թ. | 2023թ. |
|---|---|---|
| Կարճաժամկետ ավանդ ազգային արժույթով | 632,147 | 692,964 |
| Կարճաժամկետ ավանդ արտարժույթով | 138,426 | 268,481 |
| | **770,573** | **961,445** |

### (ա) Պայմաններ և մարման ժամկետներ

Ստորև ներկայացված են բանկային ավանդների պայմանները:

| հազ. դրամ | | | | 31 դեկտեմբերի 2024թ. | |
|---|---|---|---|---|---|
| **Բանկային ավանդ** | **Արտարժույթ** | **Անվանական տոկոսադրույք** | **Մարման ամսաթիվ** | **Անվանական արժեք** | **Հաշվեկշռային արժեք** |
| Թիվ 1 | ԱՄՆ դոլար | 4.5% | 03/04/2025 | 131,850 | 132,304 |
| Թիվ 2 | ԱՄՆ դոլար | 4% | 11/04/2025 | 5,948 | 6,122 |
| Թիվ 3 | ՀՀ դրամ | 9.25% | 05/06/2025 | 600,000 | 632,147 |
| | | | | **737,798** | **770,573** |

Բոլոր բանկային ավանդներն ունեն ֆիքսված տոկոսադրույք: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ ավանդների իրական արժեքը հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին, քանի որ զեղչման ազդեցությունն էական չէ:

Բանկերում կարճաժամկետ ավանդների հետ կապված Խմբի ենթարկվածությունը պարտքային, տոկոսադրույքի ու արտարժույթի ռիսկերին ներկայացված է ծանոթագրություն 18-ում:

## 10 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

| **հազ. դրամ** | **2024թ.** | **2023թ.** |
|---|---|---|
| Բանկային հաշիվներ | 588,793 | 1,313,321 |
| Ցպահանջ ավանդներ | 8,748,446 | 8,515,560 |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքների մնացորդը ֆինանսական վիճակի և դրամական հոսքերի մասին հաշվետվություններում** | **9,337,239** | **9,828,881** |

Դրամական միջոցները և դրանց համարժեքները տեղաբաշխված են 6 հայկական բանկերում, արժեզրկված կամ ժամկետանց չեն (2023թ.՝ տեղաբաշխված էին 6 հայկական բանկերում, դասակարգված են որպես ընթացիկ, արժեզրկված կամ ժամկետանց չէին):

Դրամական միջոցներ և դրանց համարժեքների հետ կապված Խմբի ենթարկվածությունը պարտքային, տոկոսադրույքի ու արտարժույթի ռիսկերին ներկայացված է ծանոթագրություն 18-ում:

## 11 Հետաձգված եկամուտ

| **հազ. դրամ** | **2024թ.** | **2023թ.** |
|---|---|---|
| **Ոչ ընթացիկ** | | |
| Ակտիվներին վերաբերող շնորհներից | 5,388,355 | 5,085,434 |
| | **5,388,355** | **5,085,434** |
| **Ընթացիկ** | | |
| Եկամուտներին վերաբերող շնորհներից | 1,545,685 | 1,451,236 |
| | **1,545,685** | **1,451,236** |

## 12 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

| **հազ. դրամ** | **2024թ.** | **2023թ.** |
|---|---|---|
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 260,215 | 180,787 |
| Ստացված կանխավճարներ ուսման վարձերի գծով | 1,857,700 | 1,530,664 |
| Աշխատավարձի և այլ կարճաժամկետ հատուցումների գծով | 20,559 | 18,599 |
| Վճարվելիք հարկեր և պարտավորություններ | 150,248 | 127 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 29,471 | 22,705 |
| | **2,318,193** | **1,752,882** |

Խմբի ենթարկվածությունը արտարժույթի և իրացվելիության ռիսկերին առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված ներկայացված է ծանոթագրություն 18-ում:

## 13 Պահուստներ

| հազ. դրամ | 1 հունվարի 2024թ. | Ավելացում | 31 դեկտեմբերի 2024թ. |
|---|---|---|---|
| Չօգտագործված արձակուրդային պահուստ | 395,856 | 27,212 | 423,068 |
| | **395,856** | **27,212** | **423,068** |

| | 1 հունվարի 2023թ. | Ավելացում | 31 դեկտեմբերի 2023թ. |
|---|---|---|---|
| Չօգտագործված արձակուրդային պահուստ | 350,937 | 44,919 | 395,856 |
| | **350,937** | **44,919** | **395,856** |

## 14 Հասույթ

| հազ. դրամ | 2024թ. | 2023թ. |
|---|---|---|
| Ուսման վարձերից | 7,334,274 | 7,382,671 |
| Եկամուտներին վերաբերող շնորհներ | 5,321,742 | 4,910,072 |
| Հյուրերի տան և հանրակացարանային ծառայություններից | 263,945 | 216,443 |
| Լրացուցիչ կրթական դասընթացներից և քննություններից | 354,829 | 168,056 |
| Այլ եկամուտ | 123,195 | 151,568 |
| | **13,397,985** | **12,828,810** |

Խմբի եկամուտները գոյանում են Հիմնադրամի կողմից ուսումնական ծառայությունների մատուցման դիմաց ուսման վարձերից, այլ ծառայությունների մատուցումից, ապրանքների վաճառքից և ստացված շնորհներից:

Ուսումնական ծառայությունների մատուցումից եկամուտը ճանաչվում է ժամանակի ընթացքում, քանի որ ուսանողները միաժամանակ են ստանում և սպառում ուսումնական ծառայությունների օգուտները:

Եկամուտներին վերաբերող շնորհները, որոնք փոխհատուցում են Հիմնադրամի կրած ծախսերը, ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով այն նույն ժամանակաշրջաններում, երբ ծախսերը ճանաչվում են:

## 15 Գրասենյակային ծախսեր

| հազ. դրամ | 2024թ. | 2023թ. |
|---|---|---|
| Ծառայությունների ձեռքբերում | 287,303 | 223,271 |
| Կոմունալ ծախսեր | 281,129 | 231,424 |
| Նյութածախս | 124,364 | 121,404 |
| Չփոխհատուցվող հարկերից ծախսեր | 107,736 | 330 |
| Նորոգում և սպասարկում | 72,180 | 39,165 |
| Ֆինանսավորումների գծով ծախսեր | 58,517 | 268,383 |
| Վարձակալության գծով ծախսեր | 57,406 | 3,150 |
| Աուդիտ և խորհրդատվություն | 25,904 | 9,298 |
| Պրակտիկայի կազմակերպման ծախսեր | 15,769 | 21,119 |
| Գրասենյակային ծախսեր | 12,081 | 174,899 |
| Բանկային ծախսեր | 2,924 | 2,637 |
| Թերթեր, ամսագրեր | 1,287 | 1,411 |
| Այլ | 325 | 34,194 |
| | **1,046,925** | **1,130,685** |

# 16 Ֆինանսական եկամուտ

| **հազ. դրամ** | **2024թ.** | **2023թ.** |
|---|---|---|
| Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ | 845,778 | 854,128 |
| **Շահույթում կամ վնասում ճանաչված ֆինանսական եկամուտներ** | **845,778** | **854,128** |

# 17 Շահութահարկ

## (ա) Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Խումբը շահութահարկը վճարում է 18% դրույքով (2023թ.՝ 18%):

| **հազ. դրամ** | **2024թ.** | **2023թ.** |
|---|---|---|
| ***Ընթացիկ հարկի գծով ծախս*** | | |
| Ընթացիկ տարի | (261,226) | (318,948) |
| ***Հետաձգված հարկի գծով փոխհատուցում/(ծախս)*** | | |
| Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում | 265,046 | (182,403) |
| | **3,820** | **(501,351)** |

## (բ) Ուղղակիորեն այլ համապարփակ եկամտում ճանաչված շահութահարկ

| **հազ. դրամ** | **2024թ.** | | | **2023թ.** | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Մինչև հարկումը** | **Հարկ** | **Առանց հարկի** | **Մինչև հարկումը** | **Հարկ** | **Առանց հարկի** |
| Հիմնական միջոցների վերագնահատում | 10,571,355 | (1,902,844) | 8,668,511 | - | - | - |
| | **10,571,355** | **(1,902,844)** | **8,668,511** | **-** | **-** | **-** |

### Արդյունավետ հարկային դրույքի հաշվարկում

| | **2024թ.** | | **2023թ.** | |
|---|---|---|---|---|
| | **հազ. դրամ** | **%** | **հազ. դրամ** | **%** |
| (Վնաս)/շահույթ մինչև հարկումը | (454,004) | 100% | 596,905 | 100% |
| Շահութահարկի հաշվարկ կիրառելի հարկային դրույքով | (81,721) | 18% | 107,443 | 18% |
| (Չհարկվող եկամուտ)/Չնվազեցվող ծախսեր, զուտ | 77,901 | -17% | 393,908 | 66% |
| **Շահութահարկի գծով (փոխհատուցում)/Ծախս** | **(3,820)** | **1%** | **501,351** | **84%** |

### (բ) Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերագրելի են հետևյալ հոդվածներին՝

| | Ակտիվներ | | Պարտավորություններ | | Զուտ | |
|---|---|---|---|---|---|---|
| **հազ. դրամ** | **2024թ.** | **2023թ.** | **2024թ.** | **2023թ.** | **2024թ.** | **2023թ.** |
| Հիմնական միջոցներ | - | - | (12,969,568) | (11,297,623) | (12,969,568) | (11,297,623) |
| Պաշարներ | 22,482 | 20,341 | - | - | 22,482 | 20,341 |
| Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր | 32,222 | - | - | - | 32,222 | - |
| Չօգտագործված արձակուրդների գծով պահուստ | 76,152 | 57,483 | - | - | 76,152 | 57,483 |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | - | - | (18,885) | - | (18,885) | - |
| Զուտ հարկային ակտիվներ/ (պարտավորություններ) | **130,856** | **77,824** | **(12 988,453)** | **(11,297,623)** | **(12,857,597)** | **(11,219,799)** |

### (գ) Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում

| **հազ. դրամ** | **1 հունվարի 2024թ.** | **Եկամտում ճանաչված** | **Այլ համապարփակ եկամտում ճանաչված** | **31 դեկտեմբերի 2024թ.** |
|---|---|---|---|---|
| Հիմնական միջոցներ | (11,297,623) | 230,899 | (1,902,844) | (12,969,568) |
| Պաշարներ | 20,341 | 2,141 | - | 22,482 |
| Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր | - | 32,222 | - | 32,222 |
| Չօգտագործված արձակուրդների գծով պահուստ | 57,483 | 18,669 | - | 76,152 |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | - | (18,885) | - | (18,885) |
| | **(11,219,799)** | **265,046** | **(1,902,844)** | **(12,857,597)** |

| **հազ. դրամ** | **1 հունվարի 2023թ.** | **Եկամտում ճանաչված** | **31 դեկտեմբերի 2023թ.** |
|---|---|---|---|
| Հիմնական միջոցներ | (10,994,569) | (303,054) | (11,297,623) |
| Պաշարներ | 20,341 | - | 20,341 |
| Չօգտագործված արձակուրդների գծով պահուստ | (63,168) | 120,651 | 57,483 |
| | **(11,037,396)** | **(182,403)** | **(11,219,799)** |

## 18 Իրական արժեք և ռիսկերի կառավարում

### (ա) Իրական արժեք

Ղեկավարությունը գտնում է, որ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները էականորեն չեն տարբերվում վերջիններիս հաշվեկշռային արժեքներից:

### (բ) Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Խումբը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- պարտքային ռիսկ,
- իրացվելիության ռիսկ,
- շուկայական ռիսկ:

Սույն ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն վերը նշված յուրաքանչյուր ռիսկին Խմբի ենթարկվածության մասին, ինչպես նաև ռիսկերի չափման և կառավարման հետ կապված Խմբի նպատակները, քաղաքականությունը և գործընթացները: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված են վերը նշված ռիսկերին վերաբերող թվային բացահայտումներ:

**Ռիսկերի կառավարման հիմունքներ**

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Խմբի ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար:

Խմբի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Խումբը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների ու Խմբի գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով: Տարբեր ընթացակարգերի միջոցով Խումբը նպատակ ունի ձևավորել վերահսկման կանոնակարգված ու կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները կունենան հստակ սահմանված դերեր և պարտականություններ:

**(գ) Պարտքային ռիսկ**

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Հիմնադրամի նկատմամբ: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում դեբիտորական պարտքերի, բանկերում կարճաժամկետ ավանդների և բանկային հաշիվների մնացորդների գծով:

**Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր**

Պարտքային ռիսկին Խմբի ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր ուսանողի ֆինանսական վիճակի հատկանիշներից: Խմբում չի գործում ձևակերպված քաղաքականություն, որը կպահանջեր վերլուծել յուրաքանչյուր նոր ուսանողի վճարունակությունը: Խումը չի պահանջում գրավ առևտրական դեբիտորական պարտքերի գծով: Խումբը սովորաբար պահանջում է որոշ դեպքերի քննություններից առաջ ուսանողները մարեն իրենց վարձավճարի գծով պարտքերը:

Պարտքային ռիսկը վերահսկելիս դեբիտորները խմբավորվում են ըստ իրենց պարտքային ռիսկի բնութագրերի՝ ըստ ուսանողների կամ իրավաբանական անձ դասակարգման և պարտքերի ժամկետայնության և վերլուծվում են ժամկետանց վճարումների տեսանկյունից:

Առևտրական դեբիտորական պարտքերի հետ կապված պարտքային ռիսկին իր ենթարկվածությունը սահմանափակելու համար Խումբը ֆիզիկական և իրավաբական անձ հանդիսացող դեբիտորների համար վճարման առավելագույն ժամկետ է սահմանել մեկ ամիսը:

Ստորև ներկայացված է դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքային ռիսկին ենթարկվածությունն առևտրական դեբիտորական պարտքերի հետ կապված՝ ըստ պայմանագրային կողմերի տեսակների:

| | Հաշվեկշռային արժեք | |
|---|---|---|
| **հազ. դրամ** | **2024թ.** | **2023թ.** |
| Դեբիտորական պարտքեր ուսանողների գծով | 707,215 | 770,384 |
| Իրավաբանական անձիք | 419,729 | 213,795 |
| | **1,126,944** | **984,179** |

## Ակնկալվող պարտքային կորուստների գնահատում ուսանողների համար

Խումբն օգտագործում է պահուստավորման մատրից ուսանողներից ստացվելիք առևտրական դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստները չափելու համար, որը ներառում է մեծ թվով փոքր գումարով մնացորդներ:

Կորստի մակարդակի հաշվարկը հիմնված է այն հավանականության վրա, որ դեբիտորական պարտքը կանցնի ժամկետանցությունից մինչև դուրս գրումը հաջորդական փուլերով:

Ստորև ներկայացված է պատքային ռիսկի և սպասվող պատքային վնասի վերաբերյալ տեղեկատվություն ուսանողների վերաբերյալ:

| 31 դեկտեմբերի 2024թ.<br>հազ. դրամ | Միջին կշռված վնասի տոկոս | Համախառն հաշվեկշռային արժեք | Արժեզրկման պահուստ |
|---|---|---|---|
| Ոչ ժամկետանց | 0% | 947,933 | - |
| Ժամկետանց ավել քան 365 օր | 100% | 179,011 | (179,011) |
| | | **1,126,944** | **(179,011)** |

| 31 դեկտեմբերի 2023թ.<br>հազ. դրամ | Միջին կշռված վնասի տոկոս | Համախառն հաշվեկշռային արժեք | Արժեզրկման պահուստ |
|---|---|---|---|
| Ոչ ժամկետանց | 0% | 876,973 | - |
| Ժամկետանց ավել քան 365 օր | 100% | 107,206 | (107,206) |
| | | **984,179** | **(107,206)** |

Խումբը դուրս է գրում ավելի քան երեք տարի ժամկետանց առևտրական դեբիտորական պարտքերը:

## Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 9,337,239 հազ. դրամ գումարով բանկային հաշիվներ (2023թ.՝ 9,828,881 հազ. դրամ), որն իրենից ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին այս ակտիվների գծով: Բանկային հաշիվները պահվում են վեց տեղական բանկերում:

## Կարճաժամկետ բանկային ավանդներ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 770,573 հազ. դրամ գումարով բանկային ավանդներ (2023թ.՝ 961,445 հազ. դրամ), որն իրենից ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին այս ակտիվների գծով: Բանկային ավանդները արժեզրկված կամ ժամկետանց չեն (2023թ.՝ Բանկային ավանդները արժեզրկված կամ ժամկետանց չէին): Խմբի ղեկավարությունը կարծում է, որ պարտքային ռիսկը էականորեն չի աճել սկզբնական ճանաչման օրվանից ի վեր: Թեև բանկային ավանդների մնացորդների հավաքագումը կարող է կախված լինել տնտեսական գործոններից, ղեկավարությունը գտնում է, որ պայմանագրային կողմերը կկատարեն իրենց պարտականությունները:

2024 և 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կարճաժամկետ ավանդները բանկերում չափվում են ամորտիզացված արժեքով:

Խումբը համարում է, որ բանկերում կարճաժամկետ ավանդների պարտքային կորուստները էական չեն:

**Ներդրումային արժեթղթեր**

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 509,225 հազ. դրամ գումարով ներդրումային արժեթղթեր (2023թ.՝ 6,000 հազ. դրամ): 2024թ. ընթացքում Խումբը 500,000 հազ. դրամով ձեռք է բերել << ֆինանսների նախարարությունից կողմից թողարկած արժեկտրոնային պարտատոմսեր, որոնց արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 9.75%: Խմբի ղեկավարության ռազմավարությունն ուղղված է երկարաժամկետ հատվածում պայմանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացմանը կամ դրամական միջոցների հոսքերի իրացմանը ակտիվների վաճառքի միջոցով:

2024 և 2023 թվականի դեկտեմբերի 3 -ի դրությամբ ներդրումային արժեթղթերը չափվում են ամորտիզացված արժեքով:

Խումբը համարում է, որ պետական պարտատոմսերի պարտքային կորուստները էական չեն:

## (դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Խումբը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Իրացվելիության ռիսկի կառավարման հայեցումը Խմբի մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Խմբի համբավը վտանգելու:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը, ներառյալ տոկոսների հաշվարկված վճարումները՝ առանց հաշվանցման համաձայնագրերի ազդեցության: Չի ակնկալվում, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ շատ ավելի տարբեր գումարների չափով:

| **2024թ.**<br>**հազ. դրամ** | **Հաշվեկշռային գումար** | **Պայմանագր. դրամական միջոցների հոսքեր** | **0-6 ամիս** | **6-12 ամիս** |
|---|---|---|---|---|
| **Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ** | | | | |
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 260,215 | 260,215 | 260,215 | - |

| **2023թ.**<br>**հազ. դրամ** | **Հաշվեկշռային գումար** | **Պայմանագր. դրամական միջոցների հոսքեր** | **0-6 ամիս** | **6-12 ամիս** |
|---|---|---|---|---|
| **Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ** | | | | |
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 136,189 | 136,189 | 136,189 | - |

Չի ակնկալվում, որ մարման ժամկետների վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ էականորեն տարբեր գումարների չափով:

## (ե) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Խմբի եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում փոխարժեքի դրույքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանը ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

### *Արտարժույթի ռիսկ*

Խումբը ենթարկվում է արտարժույթի ռիսկին այնքանով, որքանով արտարժույթները, որոնցով արտահայտված են բանկային հաշիվները, ավանդները և այլ ստացվելիք գումարները չեն համապատասխանում Խմբի ֆունկցիոնալ արժույթին: Այս գործարքները հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով, Եվրոյով և ՌԴ ռուբլով:

Ստորև ներկայացված է Խմբի ենթարկվածությունն արտարժութային ռիսկին:

| հազ. դրամ | ԱՄՆ դոլարով 2024թ. | Եվրոյով 2024թ. | ՌԴ ռուբլով 2024թ. | ԱՄՆ դոլարով 2023թ. | Եվրոյով 2023թ. | ՌԴ ռուբլով 2023թ. |
|---|---|---|---|---|---|---|
| Կարճաժամկետ ավանդներ բանկերում | 138,426 | - | - | 268,481 | - | - |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 48,743 | 44[illegible],051 | 54,764 | 58,567 | 345,081 | 47,448 |
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | (2,006) | (4 179) | (26) | - | - | - |
| Զուտ ենթարկվածություն | **185,163** | **44[illegible],872** | **54,738** | **327,048** | **345,081** | **47,448** |

Տարվա ընթացքում կիրառվել են արտարժույթի հետևյալ փոխարժեքները՝

| ՀՀ դրամ | Միջին փոխարժեք | | Փոխարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ | |
|---|---|---|---|---|
| | 2024թ. | 2023թ. | 2024թ. | 2023թ. |
| 1 ԱՄՆ դոլար | 392.73 | 392.50 | 396.56 | 404.79 |
| 1 Եվրո | 424.36 | 424.60 | 413.89 | 447.90 |
| 1 ՌԴ ռուբլի | 3.35 | 4.45 | 3.71 | 4.50 |

### *Զգայունության վերլուծություն*

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր արժևորումը (արժեզրկումը) ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման և շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծության ժամանակ ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չի առնվում կանխատեսվող վաճառքների և գնումների ազդեցությունը:

| հազ. դրամ | Արժևորում Շահույթ կամ վնաս | Արժեզրկում Շահույթ կամ վնաս |
|---|---|---|
| **31 դեկտեմբերի 2024թ.** | | |
| ԱՄՆ դոլար (10% շարժ) | 18,516 | (18,516) |
| Եվրո (10% շարժ) | 44,387 | (44,387) |
| ՌԴ ռուբլի (10% շարժ) | 5,474 | (5,474) |
| **31 դեկտեմբերի 2023թ.** | | |
| ԱՄՆ դոլար (10% շարժ) | 32,705 | (32,705) |
| Եվրո (10% շարժ) | 34,508 | (34,508) |
| ՌԴ ռուբլի (10% շարժ) | 4,745 | (4,745) |

### *(ii) Տոկոսադրույքի ռիսկ*

Տոկոսադրույքների փոփոխությունները ազդեցություն են ունենում հիմնականում ավանդների և ներդրումային արժեթղթերի վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված դրույքով պարտք) կամ դրամական միջոցների ապագա հոսքերը (փոփոխական դրույքով պարտք): Ղեկավարությունը չի կիրառում ֆիքսված կամ փոփոխական դրույքների նկատմամբ Խումբը ենթարկվածության չափը որոշող ձևակերպված քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր

ֆինանսական գործիքների առումով ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա՝ մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում ֆիքսված կամ փոփոխական դրույքներ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ որոշում կայացնելիս:

**Կառուցվածքը**

Հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի տոկոսակիր ֆինանսական գործիքների տոկոսադրույքների կառուցվածքը հետևյալն էր.

| | Հաշվեկշռային արժեք | |
|---|---|---|
| **հազ. դրամ** | **2024թ.** | **2023թ.** |
| **Ֆիքսված դրույքով գործիքներ** | | |
| Ֆինանսական ակտիվներ | 1,279,798 | 967,445 |
| | **1,279,798** | **967,445** |

**Ֆիքսված դրույքով գործիքների իրական արժեքի զգայունության վերլուծություն**

Խումբը չի հաշվառում ֆիքսված դրույքով ֆինանսական ակտիվները և պարտավորությունները որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքներ: Այդ իրակ դատճառով, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխությունները ազդեցություն չեն ունենա շահույթի կամ վնասի, կամ սեփական կապիտալի վրա:

## 19 Կապիտալի կառավարում

Հաշվի առնելով Խմբի գործունեության բնույթը՝ այն չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն: Խմբի կապիտալի նկատմամբ կիրառելի չեն արտաքին մարմինների կողմից սահմանված պահանջներ:

## 20 Պայմանական դեպքեր

### (ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Խումբը չունի ամբողջական ապահովագրություն իր գույքի համար, ինչպես նաև այն ապահովագրված չէ գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Խմբի տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ էական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

### (բ) Դատական վարույթներ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում որոնք կարող են էական ազդեցություն իր ֆինանսական վիճակի վրա:

### (գ) Հարկային պարտավորվածություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական հրահանգների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր կերպ են մեկնաբանվում տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերն ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս փաստերը Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ ավելի մեծ և էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի գործող հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

## 21 Գործարքներ կապակցված կողմերի հետ

### (ա) Վերահսկողություն

Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝ հոգաբարձուների խորհուրդը և ռեկտորը (տե՛ս ծանոթագրություն 1(ա)):

### (բ) Գործարքներ ղեկավար անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների հետ

#### *(i) Ղեկավարության վարձատրությունը*

Տարվա ընթացքում հիմնական ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը:

| **հազ. դրամ** | **2024թ.** | **2023թ.** |
|---|---|---|
| Աշխատավարձ և պարգևավճարներ | **183,069** | **169,963** |

### (գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

2024թ. ընթացքում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից Հիմնադրամը տարբեր ծրագրերի իրականացման համար ստացել է 5,781,977 հազ. դրամի ֆինանսավորում:



Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.06.2025 23:58